ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/88, 31.07.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» բաց մրցույթ

Գնման առարկան՝ օդափոխման համակարգերի տեղադրման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 25.05.2020թ.-ի թիվ 2 արձանագրության 7.1 կետը և ընդունել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու, իսկ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

	ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ
ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂ	«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ (գտնվելու վայրի և ծանուցման հասցե՝ ք. Երևան, Մուշավանի 8-րդ փող. 92 տուն, գրանցման համարը՝ 278.110.1052622, ՀՎՀՀ 00481595)
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	ԳՈՌ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ծանուցման հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 2, 430, նույնականացման քարտ՝ 009115015, տրված՝ 18.12.2017թ. 013-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր՝ 1898 հեռ. 077 10-50-66, էլ. փոստ grigoryangor@mail.ru)
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՊՈԱԿ (գտնվելու վայրի և ծանուցման հասցե՝ ք. Երևան, Արամի փող. 1)
ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՇԱԾԿԱԳԻՐԸ	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ» ՊՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՕԴԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇԵՈՔԲԵՐՈՒՄ, ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1

ԲՈՂՈՔ

1. <u>ԳՈՐԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԱՍԵՐԸ՝</u>

Բողոքաբերն ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել պատվիրատուի կողմից հայտարարված ՀԱՊ-ԲՄԱՇՁԲ-2020/1ծածկագրով բաց մրցույթին:

Գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ-ի N 2 արձանագրության համաձայն՝ ամենացածր գնային առաջարկ ներկայացրած «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ն չի ներկայացրել հայտի ապահովումը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից համապատասխան ծանուցում է ուղարկվել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կասկածելի ծանրաբեռնում «Պրոֆինոտ» ՍՊԸ-ի կողմից նշված անհամաչափությունները չի բացառվել

Հոդվածները, որ կրկին ներառնվեցան գնային առաջարկի համաձայն, գբաղեցրել է նրանց տեղը:

Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջին և երկրորդ տեղը կրկնվեցան մասնակիցների գնային առաջարկների միջև տարբերությունը կազմում է մոտ 180 (հազար) դրամ, հարցի պարզաբանման համար հարցում է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարությունն:

11.05.2020թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է պատասխան, համաձայն որի բարձրացված հարցը կարգավորվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և 42-րդ կետերով: Միաժամանակ առաջարկվել է հնարավոր հանգամանքներին համաձայնության գալուց հետո գնահատելու համար քննարկել համապատասխան մասնակիցներին դիմելու հարցը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Պատվիրատուն 12.05.2020թ-ին դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրելով քննարկման առարկա դարձնել «Պրոֆինոտ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպք թե ոչ:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից ստացվել է գրություն այն մասին, որ Հանձնաժողովն իրականացնում է ուսումնասիրություն:

Գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ-ի N 2 արձանագրության 7.1 կետի համաձայն Հանձնաժողովտ որոշել է ընթացակարգը կասեցնել մինչև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից որոշում ընդունելը:

2. ԵՐԿՐՈՐԴ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝

Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի 25.05.2020թ-ի N 2 արձանագրության 7.1 կետը չի բխում ՀՀ գործող օրենսդրության և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են իրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում իրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 41-րդ կետի համաձայն եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ իրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հատատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը

հասանելիություն չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է << պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերանցը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Սույն գործի փաստերի համաձայն ամենացածր գնային առաջարկը ներկայացրել է «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ն, որը սակայն չի ներկայացրել հայտի ապահովումը, որպիսի պայմաններում վերջինիս հայտը ենթակա է մերժման, իսկ Կարգի 42-րդ կետի համաձայն Հանձնաժողովը ընտրված մասնակից պետք է ճանաչեր հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին, այնսինքն՝ Բողոքաբերին:

Դրան հակառակ Հանձնաժողովը դիմել է << տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրելով քննարկման առարկա դարձնել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպք թե ոչ և կասեցրել է գնման ընթացակարգը՝ առանց որևէ իրավական հիմնավորման:

<< Սահմանադրության 6-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերը նշված դրույթներով ամրագրվում է իրավական պետության իշխանության թույլատրելի շրջանակի բովանդակությունն առ այն, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն << Սահմանադրությամբ, օրենքներով և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերով նախատեսված գործողություններ, հետևաբար՝ այդ լիազորությունները (գործառույթները, իրավունքները և պարտականությունները) կամայական չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին և դրանց հիման վրա ընդունված օրենսդրական այլ ակտերին, ինչը նշանակում է, որ << ում վերը նշված մարմիններն ու անձիք իրենց

գրանցվում է օրենքի գերակայությամբ՝ հետևաբար ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր միջոցով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Տվյալ պարագայում Բողոքաբերը շահույթ ստանալու ակնկալիքով մասնակցության իպտ է ներկայացրել, սակայն գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում զրկվել է այն նյութական բաղադրիչման հասնելու օրինական հնարավորությունից, ինչի ակնկալիքով վերջինս մասնակցել է Պատվիրատուի կողմից հայտարարված մրցույթին:

3. <u>ԲՈՂՈՔԱԲԵՐԻՆ ՊԱՀԱՆՋԸ՝</u>

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածների դրույթներով գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

խնդրում եմ

բողոքը բավարարել, այն է՝ պարտավորեցնել ՀԱՊ-ԲՄՄԵՁԲ-2020/1ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 25.05.2020թ-ի N 2 արձանագրության 7.1 կետը և ընդունել «Պրոֆմոնտ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու, իսկ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

<u>ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ՝</u> Բողոքը բավարարվելու դեպքում խնդրում եմ Բողոքաբերի կողմից նախապես վճարված 30000 ՀՀ դրամ բողոքարկման վճարը հետ փոխանցել «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՐ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի թիվ 220573320805000 հաշվեհամարին:

Կից ներկայացնում եմ

1. Բողոքարկման վճարի անդորրագիրը.
2. Գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ-ի թիվ 2 արձանագրության պատճենը.
3. Լիազորագիր.
4. ՀՀԻԿ 1898 արտոնագրի պատճենը և նույնականացման քարտի պատճենը.
5. Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճենը
6. Տնօրենի անձնագրի պատճենը

ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
ԳՈՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ

30.07.2020թ.

4